

ԱԳՐՈՒՐԱՏՈՒ

ԱՊՐԻԼ 15 - 25 2014 Թ. ԹԻՎ 9 (2031)

ՏԱՆՕՐԹԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ 120 ԴՐԱՄ

« ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ »

... Կառավարության նիստում քննարկվել են փոքր և միջին բիզնեսի զարգացման հարցերը՝ կարևորելով, որ փոքր և միջին բիզնեսի համար պետք է ստեղծվի բարենպաստ պայմաններ և բարենպաստ հարկային դաշտ: Պետությունն իր բոլոր լծակներով պետք է աջակցի, որպեսզի այն գործարարը, ով իր բիզնեսն իրականացնելու է օրենքի շրջանակում, որևէ կառույցից, որևէ խոչընդոտ չստանա:

... 2007-2014 թվականներին, տրավարաբուծության զարգացման ծրագրով, Հայաստան են ներկրվել ավելի քան 1800 գլուխ փոհմայիս երինջներ, և տարածամկեր վճարման պայմանով հարկացվել 60-ից ավելի փոհեամարող սուբյեկտների: Նրանց մի մասը վճարումները կատարել է ուշացումով, ինչի հետևանքով ձևավորվել են փուլեր և ստեղծվել լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ: Կայացված որոշմամբ, ուշացման հետևանքով առաջացած փուլերի դիմաց վճարված գումարներն ամբողջությամբ կուղղվեն պայմանագրով նախատեսված մայր գումարի մարմանը:

... Գործադիրն ընդունել է գույք նվիրաբերելու և հանձնելու որոշում, որով Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև ավելի վաղ կնքված վարկային համաձայնագրով, 6 մարզի 43 համայնքում ստեղծված կոոպերատիվների համար ձեռք բերված գույքը և 4 մարզի 12 համայնքի համար կառուցված ջրարբիացման համակարգերը նվիրաբերվել են կոոպերատիվներին և համայնքներին, իսկ ՓԲԸ-ի համար ձեռք բերված գույքը տրամադրվել է անհարույց և անծամկեր օգտագործման իրավունքով, էականորեն բարելավվել է ծրագրի շահառու հանդիսացող 44 համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

ԽՈՍՔԸ ԴԱՐՁԵԼ Է ԳՈՐԾ

Վերջերս Գեղարքունիքի մարզպետարանում մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն անցկացրել է աշխարհաբնային խորհրդակցություն, որին մասնակցել է նաև «Հայքմուտկոյուդի» ՓԲԸ փնթեքի Պարթիկ Լորենց:

Խորհրդակցության ընթացքում մարզի մի շարք համայնքների ղեկավարների հետ քննարկվել են համայնքներում խմելու ջրի մատակարարման համակարգերի նորացման, ջրամատակարարման սպասարկման բարելավման հետ կապված խնդիրներ:

ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ ԵՆ ԱՃԻ ՏԵՄՊԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում, 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ, արձագանքված գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի աճը, նախորդ տարվա համեմատությամբ, այս տարի ևս հուսալի նախադրյալներ ստեղծեց կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալների աճի միտումները պահպանելու համար: Միայն մարդ ամսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հանրապետությունում մսի արտադրության ծավալներն աճել են շուրջ 5%, կաթինը՝ 6.7%, իսկ ձվինը՝ 6.1%-ով:

Այս հանգամանքն իր ազդեցությունն է թողել նաև կենդանական ծագման մթերքների ներկրման և արտահանման հաշվեկշռի վրա: Այսպես, 2014 թվականի ապրիլի 15-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հանրապետությունից արտահանված մսի և մամթերքի ծավալներն ավելացել են 144.4%-ով, իսկ պանիրը՝ 168.3%-ով: Գրեթե 160%-ով ավելացել է նաև ձկան և ձկնամթերքի արտահանումը: Միևնույն ժամանակ, մամթերքի ներկրումը նվազել է 626 տոնայով, իսկ կաթի փոշունը՝ 207.1 տոնայով:

Ի դեպ, ընթացիկ տարվա նկատվող մսի արտադրության ծավալների աճով են պայմանավորված ներկայումս հանրապետության ներքին շուկայում նկատվող մեղրի գնանկան միտումները:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅ

ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՃՐԵՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանը, Ֆրանսիայի գյուղատնտեսության նախարար Ս. Լե Ֆոլի հրավերով, պաշտոնական այցով մեկնել է Ֆրանսիա:

Այցը պայմանավորված է սույն թվականի մայիսին Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ֆրանսուա Օլանդի Հայաստան նախատեսվող այցից առաջ՝ Փարիզում երկու երկրների գյուղատնտեսության ոլորտի համագործակցության կոնկրետ ուղղությունների քննարկումների և դրանց արդյունքում՝ միջպետական համագործակցության մասին համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությամբ: Հանդիպման ընթացքում հայ և ֆրանսիացի պաշտոնյաները քննարկել են գյուղատնտեսության և ագրոարդյունաբերության ոլորտում երկու երկրների համագործակցության հարցեր, ձեռք բերել մի շարք պայմանավորվածություններ:

Այցի ընթացքում նախատեսված են այցելություններ խաղողագործական փոխադրություններ, գյուղատնտեսական կոոպերատիվներ, ինչպես նաև գինու համալսարան: Ս. Կարապետյանը հանդիպել է Ռոն Ալպեր շրջանի, Ֆրանսիական զարգացման գործակալության և գյուղատնտեսության զարգացման բնագավառի գործադրության միության ղեկավարության հետ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանի պաշտոնական այցի ընթացքում կիսաթանկացվել են գյուղատնտեսության ոլորտում հայ-ֆրանսիական համագործակցության հնարավոր այն ուղղությունները, որոնք կարող են ընդգրկվել Հայաստանի և Ֆրանսիայի նախագահների հանդիպման օրակարգում:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

ՀՀ ազգային վիճակագրության ծառայության հրատարակած տվյալների համաձայն՝ 2014 թ.-ի հունվար-փետրվար ամիսներին Հայաստանում արտադրվել է 2 մլն 253.7 հազար լիտր կոնյակ, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելի է 1.8%-ով: ԱՎԾ-ի փոխանցմամբ՝ 2013 թ.-ի հունվար-փետրվարին արտադրվել է 2 մլն 213.6 հազար լիտր կոնյակ:

Նշված ժամանակահատվածում, հանրապետությունում արտադրվել է 1 մլն 443 հազար լիտր օղի, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 1.6%-ով (2013 թ.-ի հունվար-փետրվարին արտադրվել է 1 մլն 420 հազար լիտր օղի):

Ինչ վերաբերում է գինու արտադրությանը, ապա հունվար-փետրվարին Հայաստանում արտադրվել է 3,4 տոկոսով ավելի գինի, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Այսպես, հունվար-փետրվարին արտադրվել է 678.7 հազար լիտր գինի՝ 2013 թ.-ի 656.6 հազար լիտրի փոխարեն:

Հունվար-փետրվար ամիսներին Հայաստանում արտադրվել է 50.6 հազար լիտր շամպայն գինի՝ 2013 թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 58.6%-ով:

Նշված ժամանակահատվածում գարեջրի արտադրության ծավալներն ավելացել են 2 անգամ: Եթե 2013 թ.-ի հունվար-փետրվարին արտադրվել է 872.6 հազար լիտր գարեջուր, ապա 2014 թ.-ին՝ 1 մլն 760.1 լիտր:

ԱՎԾ-ի տվյալներով՝ հանրապետությունում ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունը, 2014-ի հունվար-փետրվարին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 35.6%-ով՝ կազմելով 6 մլն 701.2 հազար լիտր:

ՔՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿՏԱԸ ՅԱՆԿԱԼԻ ԱՐԴՅՈՒՆՔ

«Խաղողի լավ խնամված վազը երկար է ապրում, բայց կան չարիքներ, որոնք կարող են ճանապարհը: Ֆիլոքսերան մեծ չարիք է աշխարհում, որի փարածման ճանապարհը փակված չէ: Մենք միշտ պայքարել ենք դրա դեմ, կարանփրինի կանոնները սրբությանը պահելով՝ 70 տարի Արարապյան դաշտը կարողացել ենք գերծ պահել այդ վնասատուից: Սակայն ֆիլոքսերայի երկու օջախ է հայտնաբերվել Արմավիրի մարզի Գայ և Աղավնապոլսի գյուղերի խաղողի այգեպարտեզներում: Զիմիական պայքարի ոչ մի միջոցով չի հաջողվում ամբողջությամբ ոչնչացնել ԱՄՆ-ից դեպի Եվրոպա, այնուհետև աշխարհի խաղողագործական գրեթե բոլոր երկրներ թափանցած այդ վնասատուին, չեն օգնում նույնիսկ ամենաուժեղ և ազդեցիկ նյութերը»,- ասում է Խաղողագործական գործառնության գիտական կենտրոնի առաջատար գիտաշխատող Դերենիկ Սաֆարյանը:



Նայությունների կենտրոն» ՊՈՒԿ-ի տնօրեն Արմեն Ավագյանը:

«Պարոն Ավագյան, փվալները ցույց են տալիս, որ ֆիլոքսերան ունի բավականին արագ զարգացման կենսակերպ: Գերաբար, մեծ է վնասակարությունը այն գոտիներում, որտեղ վնասատուն փարածում է գտել, իսկ «մասնավորապես վերաբերում է Արմավիրի մարզի Գայ և Աղավնապոլսի համայնքներին: Ինչպես է կազմակերպվել կանխարգելիչ միջոցառումների գործընթացը:

- Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2014 թ. փետրվարի 27-ի որոշմամբ՝ Արմավիրի մարզի Աղավնապոլսի և Գայ համայնքներում, բույսերի պաշտպանության միջոցառումներ իրականացնելու նպատակով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈՒԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Նույն օրը խաղողի ֆիլոքսերայով վարակված այգիների քանակը աշխարհային մակարդակում վերաբերյալ պայմանագիր է կնքվել նաև կազմակերպության և այգեպրերի միջև: Աշխարհայինները, որոնք սկսվել են մարտի 15-ից և ավարտվել են ապրիլի 7-ին, իրականացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության 2013 թ. դեկտեմբերի 20-ի հրամանով ներկայացված պահանջներին համապատասխան: Հրամանով հաստատված են բույսերի պաշտպանության միջոցառումների ցանկը և իրականացման փարածային սահմանները: Ապրիլի 7-ին, աշխարհայինների ավարտից հետո, կազմվել է արձանագրություն:

Տարածման արագությունը հաշվարկելու համար բավական է նշել, որ մեկ էգը ձվադրման ժամանակ դնում է 200-500 ձու, իսկ խաղողի վեգետացիայի ընթացքում այդ վնասատուն կարող է 7-9 սերունդ տալ: Չարիքի փարածումը կանխելու նպատակով՝ այս փարի մշտադիտարկումներ և հետազոտություններ պետք է փարվեն հանրապետության բոլոր մարզերում:

«Հայ գինեգործները ցանկանում են սեղանի թեթև գինիներ արտադրել խաղողի Եվրոպական սորտերից: Սակայն այդ սորտերը նուրբ են և ավելի շուրպ են վարակվում ֆիլոքսերայով: Թե՛ն՝ որպես պարավաստակալներ (արմատային համակարգը), օգտագործվում են ամերիկյան վայրի ձևերը, սակայն դրանք ևս վարակվում են ֆիլոքսերայով, դրանց հյուսթ էլ է ծծում չարիքը»,- ասում է Դերենիկ Սաֆարյանը:

Խաղողի վնասատուով վարակված փարածներում, բույսերի պաշտպանության միջոցառումներ իրականացնելու նպատակով, բյուջեից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը և Արմավիրի մարզպետարանին հատկացվել է 7 մլն 769 հազ. դրամ այգիների քանդման և այգեպրերի սոցիալական աջակցությունը փրամարտելու համար: Թե՛մայի առևտրային, «Ազդուրպարտի» հարցերին է պատասխանում «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈՒԿ-ի տնօրեն Արմեն Ավագյանը, ձեր գնահատականը վերոնշյալ համայնքներում կատարված բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ:

«Պարոն Ավագյան, փվալները ցույց են տալիս, որ ֆիլոքսերան ունի բավականին արագ զարգացման կենսակերպ: Գերաբար, մեծ է վնասակարությունը այն գոտիներում, որտեղ վնասատուն փարածում է գտել, իսկ «մասնավորապես վերաբերում է Արմավիրի մարզի Գայ և Աղավնապոլսի համայնքներին: Ինչպես է կազմակերպվել կանխարգելիչ միջոցառումների գործընթացը:

- Կոնկրետ ի՞նչ աշխարհայիններ են փարվել ֆիլոքսերայի օջախների վերացման ուղղությամբ, որքան փարածք է ընդգրկվել միջոցառումների ցանկում:

- Բույսերի պաշտպանության միջոցառումներ, մասնավորապես՝ իրականացվել են Արմավիրի մարզի Աղավնապոլսի համայնքի՝ 0.62, և Գայ համայնքի՝ 0.15 հա փարածքների վրա: Արևելք և հենասյունները փրկափոխվել են ախտահանման կետ, իրականացվել է բնից 30-40 սմ բարձրությամբ վազերի կտրում, կրկնված վազերը կտրակվել են փրկում և այրվել, ի դեպ՝ այրվել են նաև փրկակալով արմատային արված վազերի արմատները: Ինչ վերաբերում է քանդված այգիների հողափարածներին, ապա դրանք ախտահանվել են պետիցիդով, այնուհետև իրականացվել է խոր վար: Վարից հետո հնարավոր է հայտնաբերվել վազերի արմատներ, դրանք ևս պետք է հավաքել, կտրակել փվալ, հողակտրում և այրել:

- Ի՞նչ կանխարգելիչ միջոցառումներ պետք է ձեռնարկել, որպեսզի այդ փարածներում վնասատուն կրկին փարածում չգտնի: Որո՞նք են, այս առումով, բուսասանիտարիայի մասին օրենսդրության պահանջները:

- Առնվազն երեք փարի չպետք է թույլատրել փվալ փարածքում կատարել որևէ մշակաբույսի ցանք, արգելվում է նաև փրկակալի, փրանսարտային միջոցների և մարդկանց մուտքը: Հողափարածներում պետք է իրականացվի բուսասանիտարական սկզբնական, իսկ մարդկանց և փրկակալի մուտքը կիրականացվի նախօրոք փրկափոխված ուղեփակցով:

Այդ հողակտրներից դուրս գալիս պարտադիր պետք է ախտահանվել մարդափար և բեռնափար ավտոմեքենաները, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկան: Ախտահանիչ գործերի և պետիցիդների ձեռք բերման համար Գայ և Աղավնապոլսի համայնքներում փրամարտվել են ֆինանսական միջոցներ: Արգելվում է տնկանյութի փրկափոխումը փվալ գոտուց, իսկ բերքի դուրս բերումը պետք է իրականացվի բուսասանիտարական անձնագրի առկայության դեպքում: Ուղեփակցների մոտակայքում սկզբնական կիրականացնել պայմանագրային հիմունքներով ներգրավված աշխատողները: Բույսերի պաշտպանության բոլոր միջոցառումները պետք է իրականացվեն փրկափոխի սկզբնական փրկափոխումից հետո:

- Պարոն Ավագյան, ձեր գնահատականը վերոնշյալ համայնքներում կատարված բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ:

- Բավարար, կարծում եմ ձեռնարկված բոլոր միջոցառումներն անպայման կտան ցանկալի արդյունք:

Հարցազույցը՝ Նելլի Սահակյանի

ՆԱԽԱԶՆԵՆՈՒԹՅՈՒՆ

ԱՅԳՈՒ ՀԻՄՆՈՒՄ

Օրերս Տավուշի մարզպետ Արմեն Դուլարյանն ընդունել է իտալական «LaRocca» ձիթապտի ընկերության սեփականատեր Անդրեա Դել Ֆերառոյին և ընկերության իրավաբան Ջերմանա Սիլվիին: Հանդիպմանը ներկա էին Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը, մարզպետարանի գյուղատնտեսության ու բուսապահպանության վարչության պետ Վաղարշակ Մուրչյանը, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արծրուն Լազարյանը: Իտալացի գործարարը հեղափոխված էր մարզում ձիթապտի այգիների հիմնամաթ, և առաջին հերթին, ուզում էր փրկել նաև փարածաշրջանի բնակչության պայմաններին, հողի կառուցվածքի ու հիմնական հասարակիչների մասին, նաև ուսումնասիրությանը պարզել, թե՛ ձիթենու որ փրկելու է հարմար մարզում աճեցնելու համար: Նշեց, որ Իտալիայում գոյություն ունի ձիթենու 60 տեսակ, և իրենց նպատակն է Տավուշում աճեցնել իտալական ձիթենու՝ այն համապատասխանեցնելով փրկի բնակչության պայմաններին: Արտադրություն դնելու նպատակով ներմուծել վայր ընտրելու դիտարկում են կատարելու: Առնվազն 5 տարի է պետք, առաջին բերքն ստանալու համար, իսկ մինչ այդ արտադրության համար



հումքը կներկայի Իտալիայից, - նշել է գործարարը: Մարզպետ Արմեն Դուլարյանը նշել է, որ դեռևս 1968 թվականին, Նոյեմբերյանի փարածաշրջանում, Բագրատյանի փարածքում, որտեղ կլիման մեղմ արևադարձային է, 105 հեկտարի վրա ձիթենու այգիներ են հիմնվել, իսկ 80-ականների սկզբից դրանք ամբողջությամբ բերքի փրկ են մտել: Հիմնականում չորս տեսակի ձիթենիներ են աճեցվել՝ բերված Ղրի-

մից: Ընդգրկվել են 60-ամյա փարիներին, չքրվելու հեղափոխված, այգիները վնասվեցին: Վերջին փարիներին նորից մեծացել է հեղափոխությունը ձիթենու այգիների հանդեպ և փորձեր են արվում դրանց վերականգնման ուղղությամբ: Ներկայումս հին այգիներից վարձակալության փարածքներ են փրամարտված անհատ գյուղացիների: Մարզպետը ներկայացրել է առաջարկներ՝ ոռոգման հնարավորությունների, ձիթենու հնարավոր փրկելու վերաբերյալ, որոնք կարող են աճել ոչ միայն ցածրագրի գոտիներում, այլև ծովի մակերևույթից մինչև 700 մետր բարձրության վրա: Անդրեա Դել Ֆերառոն նշել է, որ իրենց այգիները մեծ մասը գտնվում է մինչև 750 մետր բարձրության վրա, և այնպեղ ձիթենու այգիների փրկելու են աճեցվում, որոնք կարող են ընտրվանալ նաև Տավուշում: Կարևորը փվալ փրկափոխումը համար ճիշտ փրկելու ընտրությունն է: Ինչ վերաբերում է արտադրությանը, մարզպետը նպատակային է համարել Նոյեմբերյանի փարածաշրջանի դիտարկումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փարածաշրջանում առկա են այգեգործների ու պարածաշրջանների մասնագետ կադրեր: Տավուշի մարզպետարանից հյուրերն ուղևորվել են Բագրատյանի փրկում ծանոթանալու առկա պայմաններին:

ԱՇԽԱՏԱԾՈՂՈՎ

ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) 33 գյուղատնտեսության նախարարության հեղ համարել, «Տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն Յայասարանի անասնաբուժական ծառայություններին» ծրագրի շրջանակներում, կազմակերպել էր աշխատառողով «Բրուցեյլոգի կառավարման ռազմավարություն և գործողությունների պլան» թեմայով:

Միջոցառմանը մասնակցում էին 33 գյուղատնտեսության նախարարության, Սևնդամբերքի անվտանգության պետական ծառայության, «Մասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՊԳԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի, Զարգացման և համագործակցության

վերացման բազմամյա ռազմավարության վերաբերյալ: 33 ՊՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ներկայացուցիչ Տ. Մարկոսյանը ներկայացրել է Սյունիքի բրուցեյլոգային պիլոտային ծրագիրը և Յայասարանում հիվանդության ներկա ռազմավարության դիտարկումները: Աշխատառողովից հետո կազմակերպվեց նաև տարածաշրջանային աշխատառողով՝ համայնքային անասնաբուժների, Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության և «Անասնաբուժասանիտարիայի,



շվեյցարական գործակալության (SDC/Շվեյցարիա) և «Ռազմավարական գործակալության գործակալություն» հանրային կազմակերպության (ՌԶԳ) ներկայացուցիչներ, ինչպես նաև ՊԳԿ միջազգային և ազգային փորձագետներ:

Ողջունելով ներկաներին 33 գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը կարևորեց ծրագրի նշանակությունը և, առարկայական քննարկումների արդյունքում արդյունավետ աշխատանքը: Իսկ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Աբրամ Բախչազույանը, ՊԳԿ ծրագրի տեխնիկական ղեկավար Անդրեյ Ռոստալնիկ և Յայասարանում ՊԳԿ ներկայացուցիչ օգնական Գայանե Նատյանը, ողջունելով ներկաներին, նշել են, որ նման ծրագրերի արդյունքում շահում է թե գյուղատնտեսությունը, և թե սննդի անվտանգության ոլորտը:

ՊԳԿ միջազգային և ազգային փորձագետներ Ալեքսեր Պաշտոսը և Անդրեյ Ռոստալնիկ /Յունգարիայի անասնաբուժության և կենդանիների առողջության գծով պարասպասարկում/ ներկայացրել են Եվրոպական Միության և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության բրուցեյլոգի կանխարգելման և կառավարման չափորոշիչները, բրուցեյլոգի կառավարման տարբեր ռազմավարությունները, Եվրոպական Միության երկրների պայքարի փորձը բրուցեյլոգի դեմ, ինչպես նաև քննարկեցին առաջարկներ՝ Յայասարանում կենդանիների շրջանում բրուցեյլոգի կառավարման և

սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի մարզային մասնաճյուղի մասնագետների համար: Տարածաշրջանային աշխատառողովի ընթացքում ներկայացվել են բրուցեյլոգի կառավարման համաճարակաբանական հիմունքները, բրուցեյլոգի պարավասարկությունից արտաբերման և կազմակերպական միջոցառումները:

«Տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն Յայասարանի անասնաբուժական ծառայություններին» ծրագրի ընդհանուր նպատակն է՝ հզորացնել անասնաբուժական ծառայությունների հանրային ոլորտը, նպաստելով Յայասարանում սննդի անվտանգության համակարգի և գյուղատնտեսության կայուն զարգացման բարելավմանը: Ծրագիրը ֆինանսավորվում է Զարգացման և համագործակցության շվեյցարական գործակալության կողմից և իրականացվում ՊԳԿ-ի և ՌԶԳ-ի կողմից: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 724 324 ԱՄՆ դոլար: Ծրագրի անմիջական շահառուներն են ֆերմերներն ու Սյունիքի մարզի գյուղական համայնքների բնակչությունը: Ծրագրի ազդեցությունը սոցիալական մակարդակում կլինի այն, որ կունենանք գյուղի բնակչության հանրային առողջության բարելավված չափորոշիչներն ու եկամուտների աճը:

Լիանա Շախնազարյան

ԿՐԹԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրերս Գորտուգայիյի Բրազա քաղաքում տեղի ունեցավ Եվրոպական Միության «Մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների զբաղվածության ուղղված բարձրագույն կրթության ցանց» (HEN-GEAR) Տեղադրման ծրագրի մասնակից կազմակերպությունների և Ալմա Լաուրեա համալսարանների կոնսորցիումի (Alma Laures) համատեղ աշխատանքային հերթական հանդիպումը, որը նվիրված էր հետազոտական խմբերում աշխատանքների ընթացքի քննարկմանը և հետագա անելիքների պարզաբանմանը:

Ծրագրում ներգրավված են 17 գործընկեր համալսարաններ և կազմակերպություններ, այդ թվում՝ Յայաստանի 8 պետական համալսարաններ, 33 կրթության և գիտության նախարարությունը, 33 աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Յայաստանի արտադրողների և ձեռներեցների (գործատուների) միությունը, Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, Յայաստանի ուսանողների ազգային ասոցիացիան, Միևնույնի համալսարանը (Բրազա, Գորտուգայի), Գույեֆայի համալսարանը (քաղաք Գույեֆա, Անդալուսիայի նահանգ, Յարալայի Իսպանիա), Լաս Պալմաս դե Գրան Կանարիայի համալսարանը (Գրան Կանարիա կղզի, Իսպանիա):

Հանդիպման սկզբում «HEN-GEAR» ծրագրի ղեկավար Լուիզա Մեկոն-Լին՝ ողջունել և գերկաներին, ներկայացրել ծրագրերն ու հետագա գործողություններն ու բեղմնավոր աշխատանք ցանկացել: Այնուհետև գեկույցով հանդես է եկել վիճակագիր Սիլվիա Գալիաջին, ով ներկայացրել է կատարվելից հարցման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեթոդաբանության չափորոշիչների արդյունքների և դրանց տարածման կարևորությունը:

Յայաստանի ազգային ազդարային համալսարանից հանդիպմանը մասնակցում էին ՏՏ և ԻԾ կենտրոնի տնօրեն Վաչագա Մելքոնյանը, աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի վարիչ Լուսինե Մազա-Կանյանը և Լույս բաժնի առաջին կարգի մասնագետ Լիլիթ Պապիկյանը:

Լ. Մազա-Կանյանը ներկայացրել է ՀԱՄԻ-ի շրջանավարտների բազայի ստեղծման աշխատանքները և այդ տվյալների օգտագործումը շրջանավարտների զբաղվածության բարձրացման գործում՝ իր բուհի օրինակով: Ներկայացումների հաջորդող բուն քննարկումները ցույց են տվել նման հանդիպումների անհրաժեշտությունն ու կարևորությունը, քանի որ շատ հարցեր, որոնք առաջացել էին ծրագրի իրականացման տարբեր փուլերում, կարող են պատասխաններ գտնել միայն դեմ առ դեմ քննարկման, ինչպես նաև՝ սուր հարցադրումների արդյունքում:

Հանդիպման ավարտին՝ «Alma Laures»-ի փորձագիտական խմբի կողմից ներկայացվել է հետագա աշխատանքների պլանը, ժամանակացույցը և յուրաքանչյուր համալսարանից սպասվող արդյունքները:

www.anau.am

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԳՅՈՒՎԱՏՆԵՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ՇՈՒԿԱՆ՝ EAGRO.AM

Առաջին անգամ Յայաստանում, ինչպես նաև ողջ տարածաշրջանում, գործարկվել է գյուղատնտեսական ծրագիր, որը լիարժեքորեն օգտագործում է ժամանակակից տեխնոլոգիաների բոլոր հնարավորությունները՝ հօգուտ գյուղացիների և անհատ ձեռներեցների:

Eagro.am-ն ընդարձակ ինտերնետային շուկա է, որտեղ գյուղացիները կարող են վաճառքի հանել իրենց գյուղմթերքը, իսկ գնորդը կարող է արագ գտնել իրեն անհրաժեշտ գյուղատնտեսական ապրանքները: Չնայած ծրագիրը գործարկվել է նախորդ տարվա հունիսին, բայց արդեն գրանցվել են eagro.am-ի միջոցով վաճառքի և գործարքների դեպքեր, և բազմաթիվ օգտատերեր շարունակում են ստանալ զանգեր գնորդներից: Կայքում, բացի անհատ վաճառողներից ու գնորդներից, արդեն գրանցված են նաև մի շարք սննդարդյունաբերական և այլ ընկերություններ, որոնք հետաքրքրված են արագ և առանց միջնորդի գնումներ կամ վաճառք կատարել:

Eagro.am-ը ստեղծել է Մայքրոսոֆթ ինվալցիոն կենտրոնի հայաստանյան գրասենյակը: Նման կայքեր մեծ հաջողությամբ գործում են ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Գերմանիայի Կորտայում, աֆրիկյան երկրներում:

Վիճակագրական տվյալներով, նման կայքերը հնարավորություն են տալիս օգտատերերին՝ 20-60 տոկոսով ավելացնել իրենց եկամուտը և կրճատել ծախսերը:

Eagro.am-ում անվճար գրանցվելով՝ ֆերմերն ու գնորդը կարող են միմյան

հետ կապ հաստատել առանց միջնորդի, և առանց տրանսպորտի համար գումար ու ժամանակ ծախսելու: Ցանկացած ապրանքատեսակ գտնելու համար պարզապես պետք է մտնել կայք, գտնել հայտարարությունները, բջջային հեռախոսով զանգահարել վաճառողին, պայմանավորվել գնի, փոխադրամիջոցի և այլնի մասին, և հանդիպել առջուկվաճառք իրականացնելու համար:

Ավելին, հատուկ կրճատ համար, ովքեր հնարավորություն չունեն օգտվելու համակարգից, eagro.am-ը հասանելի է նաև ամենապարզ բջջային հեռախոսի միջոցով: Բավական է պարզապես մեկ անգամ գրանցվել կայքում, դուրս գրել բջջային կոդերը, և կայքի կարճ համարին ուղարկել բջջային հարդրագրություն՝ համապատասխան կոդերով: Վաճառողը կարող է բջջային հեռախոսով հայտարարություններ տեղադրել, գնորդը կարող է Լույս կերպ ստանալ իրեն հետաքրքրող հայտարարությունները: Լույս բջջային հեռախոսով կրճատ կարող են օգտվել eagro.am-ի առաջարկած բազմաթիվ այլ ծառայություններից՝ անվճար գյուղատնտեսական խորհրդատվությունից, գյուղատեխնիկայի ու բեռնափոխադրման ծառայություններից, հայտարարություններից, եղանակի տեսությունից, միջին գներից, և այլն:

Մեր տարածաշրջանում սա առաջին նման կայքն է, և Յայաստանում տարածվելուց հետո այն կընդլայնվի նաև դեպի Վրաստան, Ռուսաստան և այլ երկրներ՝ հայաստանյան գյուղմթերքի արտերկրյա գնորդների շրջանում առավել հասանելի դարձնելու համար:

Նարինե Անդրեսյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵՂՎԱՆՈՑՈՒՄ

Մինչև մեղուներին ձմեռանոցից դուրս դնելը, հարկավոր է նախապարտապես մեղվանոցի տեղը: Մեղվանոցի տեղը ընտրելուց հետո, որը պետք է լինի ցանկապարզ և քամիներից պաշտպանված, լավ է, երբ մեղվանոցը պաշտպանված է դեկորատիվ ծառերով, թփերով, վերջինս կարևոր նշանակություն ունի մեղուների կողմնորոշման համար: Բացի այդ, դեկորատիվ բույսերի ծաղիկները վաղ գարնանը սպիրակուցային (ծաղկափոշի) և ածխաջրային (նեկարով) կերի լրացուցիչ աղբյուր կարող են հանդիսանալ, իսկ ամռանը կապաշտպանեն մեղվանոցն արևի կիզիչ ճառագայթներից: Եթե ձմեռանոցային շենքում ձմեռում են մի քանի մեղվանոցների մեղվաընտանիքներ, նպատակահարմար է, ձմեռանոցից դուրս բերելուց հետո նրանց փոխադրել գարնանային մեղրաբերքի: Այդպիսով մեղվանոցի նախալեռնային և լեռնային շրջաններում ձմեռող մեղվանոցների հետ, իսկ Արարատյան դաշտի տեղափոխելուց՝ ապահովվում է պողպատի այգիների մեղվափոշուրմամբ ու մեղուների արագ զարգացումը:

Մեղվանոցում վաղ գարնանային աշխատանքների հիմնական նպատակն է՝ վերացնել մեղուների համար ձմռան ընթացքում մեղվափեթակում առաջացած անցանկալի երևույթները, նաև նպատակավոր պայմաններ ստեղծել մեղվանոցում ուժեղ մեղվաընտանիքների աճեցման համար, ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի արդյունավետ օգտագործվի գլխավոր մեղրաբերքը: Ցածրադիր շրջաններում, փերավարի վերջերին, նախալեռնայինում մարտի առաջին փաստաթղթում, լեռնայինում մարտի վերջերին ավելի հաճախ պետք է հերկել ձմեռող մեղվաընտանիքների վարքագծին: Եթե ձմեռանոցում մեղուներն անհանգիստ են և աղմկում են, անհրաժեշտ է նրանց դուրս դնել, նույնիսկ, եթե եղանակային պայմանները մեղուների մաքրման թռչանքի համար նպաստավոր չեն: Սովորաբար այդպիսի երևույթ նկատվում է ոչ բոլոր մեղվաընտանիքների մոտ: Այդ դեպքում դուրս են դնում միայն աղմկող մեղվաընտանիքները և պարզում պարճառը: Դա կարող է լինել փեթակի թույլ օդափոխության, մայր մեղվի բացակայության, կերակրաշարի վերջանալու, փեթակ մուտք գործած մյան և այլն պարճառով: Այդպիսի մեղվաընտանիքներին պետք է անհրաժեշտ օգնություն ցույց տալ:

Մեղուների ձմեռանոցից դուրս դնելու ամենա-

պատվավոր ժամանակն է, երբ դուրս ջամի չկա, պարզ, արևոտ օր է, սրվերում օդի ջերմաստիճանը 12°C-ից ցածր չէ, իսկ եղանակը բավականին կայունացել է: Մեղուները ձմեռանոցից դուրս են բերում վաղ առավոտյան, այն հաշվով, որ ժամը 10-12-ին ավարտվեն աշխատանքները: Մեղվաընտանիքները տեղադրում են գետնից 25 սմ բարձր՝ պարվանդանների վրա, առջևի մասում քիչ թեքությամբ, որը հեշտացնում է մեղուների աշխատանքը փեթակի ներսից զանազան թափոններ հեռացնելիս, նաև տեղումները փեթակի ներս չեն թափանցում:

Շար կարևոր է, որ մեղվանոցում լինի հոսող ջրով ջրաման, որպեսզի մեղուները հենց սկզբից սովորեն ջուր վերցնել այդպիսից, հակառակ դեպքում, նրանք ջրի պահանջը հագեցնելու համար մեղվանոցից շարք հեռու են թռչում, ծախսում հսկայական էներգիա, ենթարկվում զանազան պարտախաբների ու ոչնչանում: Հաճախ նրանք օգտվում են կեղտաջրերից, որոնք հիվանդությունների առաջացման աղբյուր կարող են հանդիսանալ: Նպատակահարմար է մեղվանոցում օգտագործել երկու ջրաման, որոնցից մեկի մեջ լցված լինի աղաջուր (1 գ աղ՝ 1 դուլլ ջրին):

Մեղվանոցների փեթակների արկանոցները հարկավոր է բացել առջևի շարքից: Թռչանքի ժամանակ, մեղվաբույծն ուշի ուշով պետք է հերկի բոլոր մեղվաընտանիքների թռչանքի ընթացքին: Եթե ընտանիքն աշխատանք չլավ է նախապարտապահված եղել ձմեռանոց, և մեղուների ձմեռումն էլ ընթացել է բարեհաջող, ապա մաքրման թռչանքը կարարվում է բավականին ակտիվ և արագ: Եթե առանձին ընտանիքներ վար են մաքրման թռչանք կատարում, դրանց ընդեր առաջանալիս ստուգում են, պարզելու համար, արդյո՞ք արկանոցը ծածկված չէ սարկած մեղուներով, կա՞ն լուծի նշաններ, ընտանիքը կերպաշար ունի, թե՞ ոչ: Պարզելով մաքրման թռչանք չկատարելու պարճառը՝ մեղվաընտանիքին անհրաժեշտ օգնություն են ցույց տալիս: Մեղվաընտանիքները ձմեռանոցից դուրս դնելուց հետո, առաջին հերթին, պետք է դրանց ապահովել կերով (եթե վերջինս քանակը քիչ է), այնուհետև խնամքով տաքացնել բույնը, խոնավացած վերին և կողային տաքացման բարձրը փոխա-



րինել չորերով: Բոլոր ընտանիքները պետք է ապահովված լինեն մայրերով:

ՄԵՂՎԱՆՈՑԱՆԻՔՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

Մեղվանոցի մեղվաընտանիքների գարնանային ստուգման նպատակն է՝ պարզել նրանց ընդհանուր վիճակը և աճի համար ստեղծել նպատակավոր պայմաններ: Ստուգման ժամանակ որոշվում է ընտանիքի ուժը, մայր մեղվի առկայությունը, ձվերով թրթուրներով և հարսնյակներով մեղրահացերի, դափարկ մեղրահացերի, մեղրապաշարի ջանակը: Մեղվանոցի ստուգումը չպետք է հեղաձուլել, այն հարկավոր է կատարել մաքրման թռչանքից անմիջապես հետո՝ օրվա տաք, բարենպաստ եղանակին: Եթե մեղվապահն ուզում է փոխել փեթակը, ապա այդ փեթակի տեղը դնում է ախտահանված դափարկը և մեղվաընտանիքը տեղափոխում դրա մեջ: Ազատված մեղվափեթակն անմիջապես մաքրում, ախտահանում և է օգտագործում հաջորդ ընտանիքը տեղափոխելու համար: Պետք է ձգտել, որ նոր փեթակն իր արտաքինով (գույնով, թռչանքափայտակով, կափարիչով, արկանոցի փակիչով) նման լինի նախորդին:

Ստուգման ժամանակ թերություններ հայտնաբերելիս, անմիջապես ուղղում են, ստուգման արդյունքները գրանցում մեղվանոցի մատյանում: Եթե

«ԷՔՍՊՈ - 2014»

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ «ԿԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ ԷՔՍՊՈ - 2014»-ՈՒՄ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Հայաստանի և արտերկրի 73 կրթօջախների թվում, օրերս մասնակցեց «Կրթություն և կարիերա «ԷՔՍՊՈ-2014» 14-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին:

ՀԱԱՀ փորձավարն առանձնանում էր համալսարանի՝ Բալահովիտի ուսումնասիրմանական փրկեսությունում արտադրվող «Ջովեր կաթ» կաթամթեր-

քի տեսականիով, որը համալսարանի ուսանողները ներկայացնում էին մասնագիտական գրականության վերջին տարվա հրատարակությունների, համալսարանի «ՀԱՍԿ» պաշտոնաթերթի համարների, Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի մասին պարմող նյութերի, ՀԱԱՀ-ի վերաբերյալ ֆիլմի հետ միասին: Որակական ու համայն գերազանց հարկանիշներով «Ջովեր կաթ» արտադրանքը հայրենական



արտադրությունում արդեն իսկ ունի իր յուրահատուկ շուկայահատվածը:

«Կրթություն և կարիերա» ցուցահանդեսում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը պարզաբար ներկայացնելու գործում անուրանալի է համալսարանի աշխատանքի տեղավորման և խորհրդարանի կենտրոնի դերը: Ցուցահանդեսի բացման օրն ուսանողների կողքին էր նաև համալսարանի ղեկավար, պրոֆեսոր Արշալույս Թարվերյանը: ՀԱԱՀ-ի փորձավարի

բացառիկությունը նկատեցին և նշեցին բազմաթիվ այցելուներ, այդ թվում՝ կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար Արմեն Աշոտյանը: Նրա կարծիքով՝ կրթական ցուցահանդեսները վկայում են, որ Հայաստանի կրթական համակարգը տարեցտարի առավել արդիական ու որակյալ է դառնում: Ըստ նրա՝ հայաստանյան բուհերում առկա միջազգային կրթական ծրագրերը վկայում են այն մասին, որ այդ ծրագրերը միանգամայն տեղավորվում են միջազգային զարգացումներում. «Մեր համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կրթահետազոտական կենտրոնի հարաճուն միջազգային հեղինակությունը և միջազգային գիտակրթական գործակցության այլ ծրագրերը վկայում են, որ համալսարանը ոչ միայն տեղավորվում է միջազգային զարգացումներում, այլև ստանձնում լուրջ դերակատարություն:

ՀԱԱՀ-ի նկատմամբ մեծ հետաքրքրությունը սպասելի էր ոչ միայն ցուցահանդեսի և ասելիք բացառիկության շնորհիվ, այլև այս տարվա հունվարին մեր երկրում ներդրված Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգով սահմանված «Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտներում մասնագիտական ծրագրեր իրականացնող բուհեր» խմբում լավագույն վարկանիշ ապահովելու հանգամանքով:

Սուս Ավետիսյան
Հանրային կարգերի մասնագետ
Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության
միջազգային կենտրոն,
ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն

5 ԾԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵՂՎԱՆՈՅՈՒՄ

պաշարի պակաս է հայտնաբերվում, այն լրացվում է պահեստավորված մեղրահացային մեղրով կամ գրի առնվում հեթազայում շաքարաջրով լրացնելու համար: Գարնամեղրը է իմանալ, որ էթե 435x300 մմ չափի մեղրահացը լիքը լցված է մեղրով, ապա այն պարունակում է 3.5-4 կգ մեղր, իսկ բազմահարկ փեթակների շրջանակի մեղրահացը՝ 2.5-3 կգ մեղր:

Վաղ գարնանը, էթե մեղրապաշար չկա, մեղվաընտանիքներին կերակրում են շաքարի փոշուց և մեղրից պարաստված շաքարամեղրաբլիթով՝ չորս մաս շաքարի փոշուն ավելացնում են 1 մաս նախօրոք՝ մինչև 45-50°C տաքացրած մեղր: Ցուրաքանցյուր 1 կգ մեղրին ավելացնում են 100-130 գ ջուր: Պարաստի բլիթը՝ մինչև 0,5 կգ քաշով, կախված մեղվաընտանիքի ուժից, փեղավորում են մեղուներով պարված մեղրահացերի վրա: Լավ արդյունք է փախիս, երբ վաղ

գարնանը շաքարամեղրաբլիթին ավելացնում են ծաղկափոշի, իսկ կանխարգելիչ նպատակով՝ նոգեմացիո կամ նոգեմաբ դեղամիջոցը, որն օգտագործվում է մեղուների նոգեմաբոց հիվանդության դեմ:

Էթե մեղվանոցում օգտագործվում են բազմահարկ փեթակներ, որոնք ձմեռել են երկու հարկով, գարնանը մեղուները զբաղեցրած են լինում երկրորդ հարկը, առաջինը հիմնականում դադար է լինում: Երկրորդ հարկը մեղուներով փեղավորում են մեկ այլ, մաքրված, ախտահանված հարակի վրա, իսկ առաջինը փեղավորում են պահեստ, աղտոտված հարակը մաքրում, ախտահանում և օգտագործում հաջորդ փեթակի համար: Էթե մեղուները, բացի երկրորդ հարկից, զբաղեցնում են ներքինի (առաջին) հարկի կեսը կամ 1/3-ը, ապա փեթակը թողնում են այդ վիճակում (երկու հարկով), մաքրում են միայն հարակը:

Էթե փնտեսությունն ունի մի քանի մեղվանոց, ապա նպատակահարմար է կազմել մասնագիտական օղակ և հաջորդաբար ստուգել մեղվանոցները, այս դեպքում աշխատանքը կատարվում է արագ և, իհարկե, որակով:

Ձմեռման ընթացքում մեղվաընտանիքների որոշ մասն անորակ կերապաշարից, խոնավությունից, բորբոսից, լուծից, կրծողներից և ուրիշ անցանկալի պարճաններից կարող է փրփել, թուլանալ: Այսպիսի փեթակներում կարող են լինել մայրերի կորուստներ: Նրանց պեքը է համապատասխան օգնություն ցույց տալ:

Ն.Ս. Գալստյան
Կենսաբանական գիտությունների թեկնածու
Կ.Թ. Ավետիսյան

Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Երևանում կայացավ ԵՄ կողմից համաֆինանսավորվող «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագրի մեկնարկը՝ ծրագրում ընդգրկված փեղակա ծառայություն մատուցողների և զբոսաշրջային գործակալությունների համար: Միջոցառումը կազմակերպել էր «Հեյֆեր Հայաստան» Եվրոպական միության աջակցությամբ:



Միջոցառման ընթացքում ներկայացվեց «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագիրը և քննարկվեցին ու պլանավորվեցին ապագա համագործակցության մանրամասները:

Ծրագրի ներկայացումից հետո, համակարգող Աննա Առաքելյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին՝ ծրագրում ընդգրկվելու իրենց պարաստակամության համար: «Այսօր դրվեց «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագրում ընդգրկված փեղակա զբոսաշրջային գործակալությունների ապագա ցանցի հիմքը», - ասաց փոխն Առաքելյանը:

Նա նշեց, որ ծրագրի շրջանակներում, փեղական զբոսաշրջային գործակալությունների ցանցը կսկսի համագործակցել փարածաշրջանային մակարդակում և կընդգրկվի Բուլղարիայի, Թուրքիայի և Վրաստանի զբոսաշրջային գործակալությունների ավելի լայն ցանցում: «Հուսով եմ, որ համագործակցությունը կլինի արդյունավետ և, միջազգային փորձագետի ու փեղական ծառայություն մատուցողների միասնական ջանքերով, մշակված նոր զբոսաշրջային ծրագիրը կխթանի Սևծովյան ավազանի փարածաշրջանում ներգնա զբոսաշրջության զարգացմանը», - հավելեց փոխն Առաքելյանը:

«Հեյֆեր Հայաստանի» փնտեն Անահիտ Դազնյանն ասաց, որ ուրախ է աշխատել գյուղական զբոսաշրջության ոլորտում ընդգրկված փեղական ծառայություն մատուցողների հետ: «Այս ծրագրի շրջանակներում, դուք հնարավորություն կունենաք զարգացնել արժեքային շղթաների, մարքեթինգի, բիզնես պլան գրելու, կառավարման վերաբերյալ ձեր գիտելիքները և ավելի կհմտանաք ձեր բիզնեսը վարելու հարցում», -

նշեց փոխն Դազնյանը:

«Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագիրն ուղղված է՝ միասնական ռեսուրսների հիման վրա, սևծովյան ավազանի չորս երկրների (Հայաստան, Վրաստան, Թուրքիա, Բուլղարիա) փնտեսական և սոցիալական զարգացման նպատակով, փարածաշրջանային համագործակցության և անդրաշրջանային գործընկերության զարգացմանը, գյուղական զբոսաշրջության ցանցերի ստեղծման միջոցով՝ միասնական զբոսաշրջության զարգացման նախաձեռնությունները խթանելու:

Ծրագրի շրջանակներում կստեղծվեն ուսուցում ստացած և հմտություններ ունեցող, գյուղական զբոսաշրջության ոլորտում փեղական ծառայություններ մատուցողների և փոխնական գործակալությունների ցանցեր, որոնք կմշակեն և կվճարեն եզակի զբոսաշրջային արտադրանք՝ «Տարածաշրջանային այցելուի միասնական փաթեթ» («SUUՓ»): Այն կխթանի զբոսաշրջիկների ներհույժը դեպի փարածաշրջան և իր ներդրումը կունենա ներերկրային և ներփարածաշրջանային պեղական իշխանավորների միջև աննախադեպ համագործակցության հաստատման հարցում: Ծրագրի նպատակը՝ փարածաշրջանային մակարդակով գյուղական զբոսաշրջության ոլորտում երկարաժամ արդյունքների ձեռք բերումն է:

«Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ 472,923.43 եվրո գումարի չափով՝ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի միջոցով: Ծրագիրը սկսվել է 2013թ. նոյեմբերին և կտևի 18 ամիս:

ՆԵՂԻ Սահակյան

ԽՃԱՆԿԱԾ

ՉՈՒՐԸ ԿԵՆԱՐԱՐ

Աշխարհում քաղցրահամ ջրի վերաբերյալ հեթազությունները շատ բարձր են գնահատվում, քանի որ այս չափազանց հուզիչ խնդիր լուծումն, առաջին հերթին, դրանից է կախված: Վերջերս Նիդերլանդների Տվենտե համալսարանի գիտնականների կողմից հետազոտությունը, որն իրենից ներկայացնում է աշխարհում 1996-2005 թթ. ջրի ծավալների բաշխման ու ծախսի վերաբերյալ ծավալուն վերլուծություն և փորձարկել է հեղինակավոր «Proceedings of the National Academies of Science» ամսագրում, համարվեց շատ արժեքավոր և կարարելագործված. այն վերաբերում է նաև անձրևաջրերի օգտագործմանը, մակերեսային և խորքային աղբյուրների նվազմանը, ջրերի աղտոտմանը:



Գյուղատնտեսությունն աշխարհում ծախսում է օգտագործվող քաղցրահամ ջրերի ծավալի 92%-ը, ընդ որում՝ ցորենի, եգիպտացորենի, բրնձի մասը կազմում է 27 %, կաթինը՝ 7 %, մի արտադրությունը պահանջում է 22 %: Ընդ որում, Միացյալ Նահանգները, որը երկրագնդի բնակչության միայն 5 % է կազմում, մեկ շնչի հաշվով ծախսում է փարեկան 193 մ³, այն դեպքում, երբ Հինաստանում ու Հնդկաստանում այդ թվերը համապատասխանաբար կազմում են 52 և 46 մ³: Դրա հիմնական պարճաններից մեկն այն է, որ ամերիկացիները 4,5 անգամ ավելի ջուր են միս (հարկապես տավարի) օգտագործում, քան՝ աշխարհի այլ ազգերը:

Շոշափելի է՝ մինչև 20 %, այսպես կոչված, վիրտուալ ջրի ծախսը, երբ մի երկրում ծախսված ջրով աճեցված մեքենք արտահանվում է այլ երկրներ: Առաջինների թվին են պատկանում Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրները, Հարավային Ասիան և Ավստրալիան: Երկրորդին՝ Հյուսիսային Աֆրիկան, Միջին Ասիան, Մեքսիկան, Եվրոպան, Ճապոնիան և Հարավային Կորեան:

Ջրի օգտագործման ոչ ռացիոնալ մոդելները կիրառվում են Կենտրոնական և Հարավ-Արևմտյան Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում: Առանձնապես մեծ շոշալություն է իրեն թույլ տալիս Բոլիվիան, որն ընդամենը 1,3 անգամ ավելի է միս օգտագործում, քան միջին աշխարհում, սակայն, մեկ տոննա միս արտադրելու համար, ծախսում է 5 անգամ ավելի ջուր, քան միջինն է աշխարհում:

ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՆԱԿԱՆ ԿՈՈՒԿՆԵՐԱՏԻՎՆԵՐ

Գյուղատնտեսական կոոպերատիվները վերջին 150 տարիներին աշխարհի տարբեր երկրներում մեծ դեր են խաղացել գյուղատնտեսության զարգացման գործում: Կոոպերատիվը պետք է դիպել որպես մասնավոր ձեռնարկատիրության այնպիսի ձև, որը պարկազան է իր անդամներին, համարել վերահսկվում է նրանց կողմից և ծառայություններ մատուցում նրանց: Կոոպերատիվը միավորում է մարդկանց, ովքեր, առնվազն, մեկ ընդհանուր շահ ունեն, որը սովորաբար ձևակերպվում է որպես խնդիր, որ անդամները կուզենային համարել լուծել: Շուկայամբար բարեփոխումների, սեփականաշնորհման և ապակենտրոնացման ներկայիս միությունների ազդեցության ներքո՝ կոոպերատիվն իրավացիորեն դիմում է՝ որպես գյուղացիների տնտեսական նախաձեռնությունները կյանքի կոչող, կայուն զարգացում և արդյունավետ կառավարում իրականացնելու ամենահարմար կազմակերպական ձևը: Կոոպերատիվի սեփականատերերը կոոպերատիվի անդամներ են, որոնք միաձայնակ կոոպերատիվի արտադրած կամ ձեռք բերած ապրանքներից կամ ծառայություններից օգտվողներն են: Կոոպերատիվների մեծ մասի գերխնդիրը՝ ֆերմերների որոշակի շահերի պաշտպանությունն է: Ֆերմերները կոոպերատիվի ստեղծումը նախաձեռնում են՝ արձագանքելով տնտեսական որևիցե հիմնահարցի, որը բացասական ազդեցություն է ունենում իրենց վրա: Այդպիսի հիմնահարց կարող է լինել՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացման կետերի անբավարարությունը, գյուղատնտեսական ներդրանքների մատակարարման, պահեստային տնտեսության, ծառայությունների կամ վարկային հնարավորությունների բացակայությունը կամ դժվարությունները: Կոոպերատիվի ամենակարևոր հարկանիշն այն է, որ, ֆերմերներն իրենց խնդիրները միանակ լուծելու փոխարեն, դա անում են՝ օգտվելով համարել աշխարհում առավելություններին: Գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնադրելու պայմաններից մեկը՝ շահագրգիռ ֆերմերների աշխատությունն է: Դա այն մարդկանց խումբն է, ովքեր գիտակցում են իրենց առև ծառայած խնդիրներին համարել լուծում գտնելու անհրաժեշտությունը և ցանկություն ունեն այդ նպատակով միավորվելու: Ի տարբերություն ներդրողների վրա հիմնված ընկերությունների՝ կոոպերատիվները չեն ձգտում ունենալ բեզլեսի հնարավորություն, որը, ներդրումների դիմաց, իրենց համար կապահովի ամենաբարձր հարույցը և կարող է դառնալ լրացուցիչ եկամուտ ստանալու հնարավորություն: Կոոպերատիվ ձևավորելիս, ապագա անդամները նախ՝ ցննարկում են իրենց կարիքներն ու ընդհանուր շահերը, ապա փնտրում իրենց խնդիրները լուծելու հնարավոր այլընտրանք: Կոոպերատիվ կազմակերպելու վերաբերյալ որոշում կայացնելիս, հիմնարար նշանակություն ունի անդամների կողմից այն բանի հասկացողությունն ու ընդունումը, որ կոոպերատիվն իրենց սեփականությունն է և ենթակա է իրենց կողմից վերահսկողության: Կոոպերատիվի անդամների որոշմամբ, կոոպերատիվը կարող է ապրանքներն ու ծառայություններ մատուցել նաև ոչ անդամներին՝ ապրանքաշրջանառության և արտադրության ծավալների ավելացմամբ, շոշափելի տնտեսումների հասնելու նպատակով: Մասնակիցների յուրաքանչյուրը պետք է հսկակորեն պարկերացնի այն առավելությունը, որ



տրակ է համարել տնտեսական նախաձեռնությունը՝ համեմատած նույն ռեսուրսները սեփական տնտեսությունում ներդնելու տարբերակի հետ: Որոշակի ծառայություններ մատուցելու առումով, առաջարկվող կուլեկտիվ կազմակերպությունը պետք է կարողանա գործել ավելի արդյունավետ, քան՝ անհատ ֆերմերները: Օրինակ՝ անհատ արտադրողի համար կարող է դժվար լինել ֆինանսավորել, որևէ բիզնես կազմավորելն ու վարելը, բայց նույն բանը կարելի է անել ավելի արդյունավետ կերպով, երբ միասին էք գործում: Ֆերմերի կոոպերատիվ մտնելը հրապուրիչ դարձնելու համար, կոոպերատիվի անդամակցության օգուտները պետք է ավելի ծանրակշիռ լինեն, քան պարտականությունները: Դառնալով կոոպերատիվի անդամ՝ յուրաքանչյուր ֆերմեր կարող է օգտվել կոոպերատիվի առավելություններից, այն է՝ իրենց արտադրանքի շուկայահաման նվազագույն ծախսեր և ավելի բարձր շուկայական գին, ինչպես և այլ արտադրանքների, ծառայությունների, շուկաների և վարկերի մատչելիություն:

Գյուղատնտեսական արտադրանքի մշակման և իրացման նպատակով պահանջներն անընդհատ փոփոխվում են և ավելի խստանում, կոոպերատիվն դառնում է այդ պահանջների կատարման արդյունավետ միջոցներից մեկը, քանի որ գյուղացիական տնտեսությունների հիման վրա ձևավորվող կոոպերատիվն ի վիճակի է միավորելու նրանց ենթակայության միջոցները՝ իրենց խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով:

Գյուղատնտեսության կոոպերացման նպատակն է՝ հիմնավորել համագործակցությունը, տնտեսավարման նոր ձևերն ու արտադրատնտեսական արդյունավետ հարաբերությունները, որոնք պետք է դրվեն մարդկանց, կուլեկտիվ և ֆինանսական ռեսուրսների համալիր օգտագործման, բնական գործոնների ակնկալվող արդյունքների հասնելու համար, և ուղղված լինեն որոշակի կամ միատեսակ նպատակի հետարվող մարդկանց, խմբերի, տնտեսավարող սուբյեկտների համարել գործունեություն վարելուն, որը դրսևորվում է համահունչ շահեր ունեցողների կամավոր միավորման՝ կոոպերացման միջոցով:

Ներկայումս կոոպերացման արագ թափ հաղորդելը պետք է դառնա ագրարային ոլորտի կարևորագույն գործառնություններից մեկը: Դա հաշվի առնելով՝ ԳԱԳԿ-ը մշտապես՝ ինչպես տարվա ընթացքում, այնպես էլ ապագայում, անդադառնալու է կոոպերացման խնդիրներին:

Գյուղատնտեսության աշակերտության հանրապետական կենտրոն

ԽՃԱՄԵՍԱԳՐ

ԽՈՐՀՐԴՎԱՌ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկությանը հայտնի է առնվազն 8 մթերք, որոնց նմանությունը մեր մարմնի մասերին կամ օրգաններին պարասեանական չէ և հենց օրգանիզմի այդ մասի համար են դրանք առավել օգտակար:

Այսպես, գլխուղեղ հիշեցնող ընկույզի միջուկը պարունակում է օմեգա-3 ճարպաթթուներ և B₁ ու B₂ վիտամինների բարձր քանակներ, որոնք կարիվացնում են գլխուղեղի արյան շրջանառությունը, կազմակերպում հիշողությունը, կանխում ծեղրացումը:



Թե արտաքին տեսքով թե բազմախոտեց կառուցվածքով լուրիկը սիրոյ է հիշեցնում: Նրանում պարունակվող լիկոպինը նվազեցնում է սրտային հիվանդությունների ռիսկը, իսկ կալիումը խիստ անհրաժեշտ է սրտամկանի նորմալ գործունեության համար: Միայն պետք է հիշել, որ լուրիկի օգտակարությունն աճում է փասն անգամ, երբ օգտագործվում է բուսական յուղի, առավել ևս՝ ձիթապղպի յուղի հետ:

Կարմիր գինին, որ արյուն է հիշեցնում, հարուստ է պոլիֆենոլներով և այլ հակաօքսիդանտներով, որոնք թույլ չեն տալիս, որպեսզի արյան անոթները խցանվեն «վաղ» խոլեստերինով: Այն օգտակար է նաև սակավարյունությամբ տառապողների համար, հարկապես կազորը, որն աչքի է ընկնում երկար օրգանական միացությունների բարձր պարունակությամբ:



Ոսկորներ հիշեցնող նեխուրի (ջարավուզի) ցողունները հենց դրանք համար էլ օգտակար են, քանի որ մեծ քանակությամբ սիլիցիում են պարունակում, որը կարգավորում է ոսկորների միներալացումը, և միանգամայն անվտանգ՝ օրգանական միացությունների ձևով նաբիրում, որն, առանց հորեղում կուտակվելու վտանգի, նպաստում է սննդարարների յուրացմանը:

Նարինջը, որը կանացի կուրծք է հիշեցնում, պարունակում է լիմոնոիդներ, որոնք կանխում են չարորակ բջիջների բազմացումը: Նրանցում շատ կա նաև ֆոլատներ, որն անվանում են կանացի գլխավոր վիտամին:



Սրտամուշ հիշեցնող կուրծքապղպեղ նրա ամենամեծ բարեկամն է, քանի որ խթանում է սրտանոթախոլեստերինի առաջացումը՝ նպաստելով մարտոդությանը, վերացնում է սրտխառնոցն ու գազերի առաջացումը: Սակայն, այս բոլորն սաված է առողջ սրտամուշի համար:

Երիկամներ հիշեցնող լոբու հարկիկը և հարկապես՝ կանաչ լոբին նպաստավոր են երիկամների շարքի հիվանդությունների՝ երիկամների այրուցվածության, միզաքարային և միզապարկի հիվանդությունների դեպքում: Բացի այդ, լոբին բարեբար է ազդում մակերիկամների վրա:



Գազարի հարույթին նայելիս, աչք ենք տեսնում ծիածանագործ թաղանթով: Գազարը չափազանց օգտակար է տեսողության համար՝ բերավարողի բարձր պարունակությամբ շնորհիվ, որն ակտիվանում է ճարպային միացությունների ներկայությամբ:



ՀՆԵՒԴՊՈՒՄ

ՍԵՄԻՆԱՐ - ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերջերս Արարատի ԳԱԳԿ-ում տեղի ունեցավ աշխարհային հանդիպում /ԳԱԳԿ/ Գյուղատնտեսության աշակերտության հանրապետական կենտրոնի փոխտնօրեն՝ Վ. Հայկազյանի հետ: Բացման խոսքով հանդես եկավ պրոֆ. Վ. Հայկազյանը, ով ներկայացրեց կազմակերպված խորհրդարկարկական ուսուցման նպատակի, կարելիությունների և արդյունավետության մասին:

ԳԱԳԿ-ի փոխտնօրեն՝ Վ. Հայկազյանի այցելությունները ԳԱԳԿ-եր՝ պայմանավորված է գյուղատնտեսության նախարարի պահանջով՝ տեղեկանալու, թե ինչպես են աշխատում գյուղատնտեսության խորհրդարկանները և համագործակցում համայնքների խորհրդակցական խմբերի հետ: Վ. Հայկազյանը գրուցել է բոլոր խորհրդարկանների հետ, իսկ գրույցն ամփոփելուց հետո, ցննարկել նրանց անելիքների և խնդիրների մասին:

Վարդան Հայկազյանը խորհրդարկանների ներկայացրել է ուսուցում բնական երկրագործության, դրա տարրերի, կենդանի հողի ծավալային բաղադրության, հողի պինդ նյութի կշռային բաղադրության, հողաբնակ օրգանիզմների, հողի օրգանական նյութի բաղադրության և հողում բնակվող օրգանիզմների կենսաբանական կարևորության մասին:

Ամփոփելով հանդիպումը՝ ԳԱԳԿ-ի տնօրեն Գ. Գալստյանը ներկաների անունից շնորհակալություն է հայտնել՝ կարևորելով հանդիպման անհրաժեշտությունը:

Ուսուցմանը մասնակից ԳԱԳԿ-ի աշխարհակիցներին և գյուղատնտեսության գծով խորհրդարկաններին հուզող հարցերին Վ. Հայկազյանը րվել է սպառնչ պատասխաններ:

ՀԵՏԱԲՈՒՔԻՆ, ԱՆՀՐԱԾԵՇՏ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ

ԲՆՈՒԹՅԱՆ ԱՏԵՂՑԱԾ ԵՐԱՇԸՐ

Կրավաքի սերմի ծննդավայրը հին Յուդիսարանն է, հենց այնտեղ էն մոտ 9000 տարի առաջ արտադրվել առաջին քայթանե գործվածքները...

գործվում է Փափուկ հյուսվածքն օգտագործվում է փեքսորի արդյունաբերության մեջ՝ բարձրորակ գործվածք սրահալու համար...

միներ ու հանքային նյութեր: Փամա-նակակից հետազոտությունները ցույց են տվել, որ կրավաքի յուղի օգտագործումը 37%-ով նվազեցնում է կաթվածի զարգացման վրանագը...



կարողակց, կորմալացնում արյան ճնշումը, նպաստում սակավարյունության բուժմանը...

Հին հույներին էլ էին հայրնի կրավաքի սերմի բուժիչ հատկությունները: Արևելյան բժշկության մեջ օգտագործվում էին կրավաքի սերմերն ու յուղը...

Քայթանե հագուստի հեր կաված նաև սննդի արդյունաբերության մեջ: Քայթանե հագուստի հեր կաված նորամուտ է անհիմն չէ՝ էկոլոգիապես մաքուր հյուսվածքներն էլ էկոլոգիական լիցքեր չեն հավաքում իրենց վրա...

ժողովրդական բժշկության մեջ կրավաքի յուղը լայն կիրառում ունի ճարպակալման, աղեստամոքսային տրակտի, սրտամոխային համակարգի հիվանդությունների դեպքում կիրառվող դեղերի ու բուժիչանիսարգելիչ սննդակարգում:

Կրավաքի սերմերն ու յուղն օգտագործվում են:

Որպես լուծողական՝ փորկապուրջի դեպքում, բարելավում են ենթաստամոքսային գեղձի վիճակը, իջեցնում արյան մեջ շաքարի մակարդակը...

Արտաքին օգտագործման ձևով կրավաքի ձեթը կիրառվում է հոդերի ու ողնաշարի, այրվածքների ճառագայթային հիվանդություններից առաջացած վերքերի, ուռուցքների, ինչպես նաև միջատների խայթոցների փրկային բուժման համար:

«Ամեն ինչ դարման» կրավաքի սերմերն ու յուղն օգտակար են յուրաքանչյուրին, և էթե անգամ չեն բուժում ամեն ինչ, ապա օգնում են օրգանիզմին ուժ հավաքել, կարգավորում են օրգանիզմի բնականու կենսագործունեությունը:

ՍԱԵՌՈՒ ՍԱՌԻՆԴ

«Մաքուր սննդակարգ նշանակում է սննդի օգտագործում՝ բնական տեսքով, որքանով որ դա հնարավոր է»,- ասում է սննդաբան Պատրիսիա Բանմանը...

2. Զյացրեք շաքարի օգտագործումը՝ ձեր սննդակարգ մաքրելու համար քչացրեք քաղցր եգիպտացորենի, կոնֆետների, յուգորտի, ըմպելիքների և հասցարուկների օգտագործումը:

յուր կումի հետ միասին ուժեղ հակաօքսիդանտներ են ստանում, որոնք կամայաբեղում են քոլեստրոլի վնասումը: Վերջերս կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ օրական 3 բաժակ սուրճի կամ թնի օգտագործումը կարող է իջեցնել երկրորդ ասիայի շաքարային դիաբետի վտանգը:

1. Ավելացրեք բանջարեղենի օգտագործումը, բանջարեղենը պարունակում է սրտի համար օգտակար վիտամինների, հասկաօքսիդանտների և բջջանյութի մեծ քանակություն՝ քիչ կալորիաների դեպքում, ինչը բարենպաստ է ազդում կազմվածքի վրա:

3. Երկուշաբթին բուսական սննդի օր հայտարարեք, շաքարակալման մեկ անգամ բուսական սննդում օգտակար է մարդկանց և Երկրագնդի առողջության համար:

5. Պատրաստեք կրկնակի չափաբաժնով, երբ որքանառջ սնունդ եք պատրաստում, պատրաստեք դա կրկնակի չափաբաժնով: Մասնաբաժնում մաքուր սննդի առկայությունը չի բողմի ձեզ ծանր օրվանից հետո հագնել կապակածի անառողջ սննդով: Կրկնակի չափաբաժնով սննդի պատրաստումը մաս բարենպաստ է ազդում Երկրագնդի էներգետիկ պաշարների վրա:

Advertisement for AgriNews magazine. Includes title 'ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ԱԳՐՈՒՐԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի 2014թ. բաժանորդագրությունը'. Lists subscription rates for different durations and regions.

Footer for AgriNews (AGRONEWS) with contact information: Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80. E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am